

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԴԱՇՆԱԳՐԻՆ ԿԻՑ ԿԱՄԸՆՏԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ԳԼՆԱԿՈՐ ԱՍՍԱԲԼԵԱՅԻ 1966 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի 2200 Ա (XXI) ԲԱՆԱԶԵՎՈՎ ԵՎ
ԲԱՑ Է ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ, ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 1976 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-ԻՆ՝ 9-ՐԴ ՀՈԴԿԱԾԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ

ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,

Նկատի ունենալով, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի (այսուհետև՝
Դաշնագիր) հետագա նպատակներին հասնելու և նրա որոշումները իրականացնելու համար նպատակահարմար է
սույն Դաշնագրի IV մասի հիման վրա հաստատված Մարդու իրավունքների կոմիտեին (այսուհետև՝ Կոմիտե)
հնարավորություն ընձեռել ընդունելու և քննության առնելու, ինչպես նախատեսված է սույն արձանագրությամբ,
հաղորդումներ առանձին անձանցից, ովքեր հաստատում են, որ իրենք զոհ են Դաշնագրում շարադրված որևէ
իրավունքի խախտման,

համաձայնել են ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Դաշնագրի մասնակից այն պետությունը, որ դառնում է սույն արձանագրության մասնակից, ճանաչում է
Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու և քննության առնելու իր իրավասությանը ենթակա այն անձանց
հաղորդումները, ովքեր պնդում են, թե իրենք զոհ են Դաշնագրում շարադրված որևէ իրավունքի խախտման՝
տվյալ մասնակից պետության կողմից: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդում, եթե այն վերաբերում է
Դաշնագրին մասնակից մի պետության, որը, սակայն, մասնակից չէ սույն արձանագրությանը:

Հոդված 2

1-ին հոդվածի դրույթները պահպանելու պայմանով, այն անձինք, ովքեր պնդում են, թե Դաշնագրում
թվարկված իրենց որևէ իրավունք խախտվել է, և ովքեր սպառել են իրավական պաշտպանության ներքին բոլոր
միջոցները, կարող են գրավոր հաղորդում ներկայացնել Կոմիտեի քննարկմանը:

Հոդված 3

Կոմիտեն կարող է անընդունելի համարել սույն արձանագրության համաձայն ներկայացվող անստորագիր
կամ, Կոմիտեի կարծիքով, այդպիսի հաղորդումներ ներկայացնելու իրավունքը չարաշահող և կամ Դաշնագրի
դրույթներին անհամատեղելի ամեն մի հաղորդում:

Հոդված 4

1. Կոմիտեն 3-րդ հոդվածի դրույթները պահպանելու պայմանով, սույն արձանագրության համաձայն
ներկայացվող ցանկացած հաղորդման մասին տեղյակ է պահում սույն արձանագրությանը մասնակցող այն
պետությանը, որը, ինչպես պնդվում է, խախտում է Դաշնագրի որևէ դրույթ:

2. Ծանուցում ստացած պետությունը վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է այդ հարցը
պարզաբանող գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ և, եթե դրանք եղել են, այն ցանկացած
միջոցառումները, որպիսիք կարող էր ընդունել տվյալ պետությունը:

Հոդված 5

1. Կոմիտեն, 3-րդ հոդվածի դրույթները պահպանելու պայմանով, ստացված հաղորդումները, հաշվի առնելով
առանձին անձանց և շահագրգռված մասնակից պետության ներկայացրած բոլոր գրավոր տվյալները:

2. Կոմիտեն չի քննում անձանցից ստացված և ոչ մի հաղորդում, քանի դեռ չի հանդիմանում, որ
ա/ այդ նույն հարցը չի քննարկվում միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի

համաձայն.

բ/ տվյալ անձն սպառել է իրավական պաշտպանության բոլոր մատչելի ներքին միջոցները:

Այս սկզբունքը չի գործում այն դեպքերում, երբ այդպիսի միջոցների գործադրումն անհիմն կերպով ձգձգվում է:

3. Սույն արձանագրությամբ նախատեսված հաղորդումները քննելիս Կոմիտեն գումարում է փակ նիստեր:

4. Իր նկատառումները Կոմիտեն հայտնում է համապատասխան մասնակից պետությանը և անձին:

Հոդված 6

Կոմիտեն Դաշնագրի 45-րդ հոդվածով նախատեսված ամենամյա զեկուցման մեջ ներառում է սույն արձանագրությանը համապատասխանող իր գործունեության համառոտ հաշվետվությունը:

Հոդված 7

Այսուհետև՝ մինչև Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ին ընդունած գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին հայտարարությանը վերաբերող 1514 (XV) բանաձևի նպատակներին հասնելը, սույն արձանագրության դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ և ՄԱԿ-ի ու նրա մասնագիտացված հիմնարկությունների այլ միջազգային համաձայնագրերով և փաստաթղթերով այդ ժողովուրդներին ընձեռված հանրագիր ներկայացնելու իրավունքը:

Հոդված 8

1. Սույն արձանագրությունն ստորագրելու համար բաց է Դաշնագիրը ստորագրած ցանկացած պետության համար:

2. Սույն արձանագրությունը ենթակա է վավերացման Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերացված պաշտոնաթուղթը ի պահ է տրվում պահպանման Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն արձանագրությունը միանալու համար բաց է Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության համար:

4. Միացումն իրականացվում է միանալու վերաբերյալ փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն արձանագրությունը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին հայտնում է ամեն մի վավերացնող պաշտոնաթղթի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ավանդադրման մասին:

Հոդված 9

1. Դաշնագիրն ուժի մեջ մտնելու պայմաններում սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի մոտ վավերացված տասներորդ պաշտոնաթղթի կամ միանալու փաստաթղթի ավանդադրման օրից երեք ամիս անց:

2. Վավերացված տասներորդ պաշտոնաթղթի կամ միանալու փաստաթղթի ավանդադրումից հետո սույն արձանագրությունը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում վավերացրած սեփական պաշտոնաթղթի կամ դրան միանալու փաստաթղթի ավանդադրման օրից երեք ամիս անց:

Հոդված 10

Սույն արձանագրության որոշումները՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության, տարածվում են ֆեդերատիվ պետությունների բոլոր մասերի վրա:

Հոդված 11

1. Սույն արձանագրությանը մասնակցող յուրաքանչյուր պետություն կարող է ուղղումներ առաջարկել և դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետև Գլխավոր քարտուղարն ամեն մի առաջարկված ուղղում հղում է սույն արձանագրությանը մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, թե իրենք արտահայտվում են, արդյոք, մասնակից պետությունների կոնֆերանս հրավիրելու օգտին՝ այդ առաջարկությունները քննարկելու և դրանք քվեարկելու նպատակով: Եթե այդպիսի կոնֆերանս հրավիրելու օգտին արտահայտվում է մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը, ապա Գլխավոր քարտուղարը հրավիրում է կոնֆերանս՝ Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Կոնֆերանսին ներկա գտնվող և քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ամեն

մի ուղղում հաստատման է ներկայացվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեա:

2. Ուղղումներն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայում հաստատվելուց և սույն արձանագրությանը մասնակցող պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ ընդունվելուց հետո՝ համաձայն այդ պետությունների սահմանադրական ընթացակարգի:

3. Ուղղումներն ուժի մեջ մտնելուց հետո դրանք դառնում են պարտադիր՝ ուղղումներն ընդունած մասնակից պետությունների համար, իսկ սյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում իրենց իսկ ընդունած սույն արձանագրության որոշումները և ամեն մի նախորդ ուղղում:

Հոդված 12

1. Մասնակից պետություններից ամեն մեկը ցանկացած ժամանակ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցումով կարող է հրաժարվել սույն արձանագրությունից:

Հրաժարումն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալու օրից երեք ամիս անց:

2. Հրաժարումը չի խանգարում, մինչև այն ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 2-րդ հոդվածի համաձայն, շարունակելու ներկայացված ամեն մի հաղորդման վերաբերյալ սույն արձանագրության դրույթների իրագործումը:

Հոդված 13

Անկախ սույն արձանագրության 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումների, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Ղաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին տեղեկացնում է հետևյալը.

ա/ 8-րդ հոդվածի համաձայն ստորագրելու, վավերացումների և միանալու մասին.

բ/ 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն արձանագրությունը և 11-րդ հոդվածի համաձայն՝ ամեն մի ուղղում ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

գ/ 12-րդ հոդվածի համաձայն՝ հրաժարման մասին:

Հոդված 14

1. Սույն արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն բնագրերը հավասարապես նույնական են, ենթակա է ի պահ հանձնման Միավորված ազգերի կազմակերպության արխիվին:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն արձանագրության վավերացված պատճեններն ուղարկում է Ղաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին: